

Կ Ա Ր Ծ Ի Ք

Գայանե Ռոբերտի Պողոսյանի «Ուրարտուի (Վանի թագավորություն) կերպարվեստի պատկերազրական առանձնահատկությունները» ատենախոսության մասին, ներկայացված ԺԷ.00.03- «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդին, թեկնածուական աստիճանի պաշտպանության համար

Ուրարտուի արվեստը հայ և օտարազգի գիտնականների կողմից բավականին ուսումնասիրված բնագավառներից է, սակայն կան բազմաթիվ խնդիրներ, որոնք մանրակրկիտ հետազոտության կարիք ունեն։ Այս առումով գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում Գայանե Պողոսյանի ատենախոսության թեման և հետազոտության նպատակը։ Այն է՝ գիտական շրջանակներին հայտնի արվեստի գործերի և Հայաստանում ու նրա սահմաններից դուրս գտնվող ուրարտական մի շարք հնավայրերից վերջին շրջանում հայտնաբերված գտածոների ուսումնասիրության միջոցով բացահայտել ուրարտական կերպարվեստի և դեկորատիվ-կիրառական արվեստի ոճա-պատկերազրական առանձնահատկություններն ու խորհրդաբանության ակունքերը։

Ուրարտուի կերպարվեստի ուսումնասիրությունը ներկայացվում է նրա հարուստ դիցարանի ծիսական համակարգի ու սեպագիր աղբյուրների մանրակրկիտ քննության միջոցով և այդ համատեքստում դիտարկվում նաև հարևան պետությունների մշակութային փոխառնչություններին վերաբերող հարցերը։ Հանգամանալից հետազոտվում է ուրարտական արվեստի պատկերազրության ձևավորման ակունքները, խորհրդանշական բովանդակության և ոճական առանձնահատկությունների զանազան դրսևորումները։ Գիտական պատշաճ մակարդակով կատարված արվեստաբանական, պատմահամեմատական, աղբյուրագիտական, կրոնա-դիցաբանական վերլուծությունների արդյունքում

հայցորդը ներկայացնում և հիմնավորում է ուրարտական արվեստի պատկերագրության վերաբերյալ իր դիտարկումները:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, համապատասխան տրոհումներ ունեցող երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված զրականության ընդարձակ ցանկից (295 տպագիր աղբյուր, 16 համացանցային նյութեր), հապավումների, աղյուսակների ցանկերից և 47 աղյուսակներում խմբավորորված նկարների հարուստ ալբոմից: Ներածության մեջ հանգամանալից հիմնավորվում է ուսումնասիրության արդիականությունը, բնորոշվում առարկան ու թեմայի մշակվածության աստիճանը, ներկայացվում է հիմնահարցի հետազոտության նպատակն ու խնդիրները: Առաջին գլխում Էրեբունի, Թեյշեբաինի և Ալթին-թեփե հնավայրերում հայտնաբերված որմնանկարների հետազոտության միջոցով ներկայացվում է ուրարտական մոնումենտալ գեղանկարչության թեմատիկ և պատկերագրական նկարագիրն ու գեղարվեստական առանձնահատկությունը: Քանդակագործության նմուշների ուսումնասիրությանը նվիրված երկրորդ գլխում հետազոտվում են Վանի թագավորության գերագույն աստվածությունների պատկերագրական դասական և ժողովրդական ազատ ոճերի դրսևորումները, նոր գտածո ձկնակերպ աստվածության դիցաբանական և պաշտամուքային ակունքները: Դեկորատիվ-կիրառական արվեստի գործերի (բրոնզյա թիթեղներ, զենքեր, գոտիներ, կաթսաներ, ծիսական անոթներ) գեղարվեստական հարդարանքին նվիրված երրորդ գլուխում համեմատական ուսումնասիրության միջոցով ներկայացվում է դրանց պատկերագրության հատկանշական գծերը և դրանց զուգահեռները արվեստի այլ տեսականներում:

Ատենախոսության զիտական նորությունը և կարևոր ներդրումն այն է, որ հայ արվեստագիտության մեջ առաջին անգամ առանձին ուսումնասիրության նյութ է դարձել Ուրարտուի արվեստի պատկերագրության համակողմանի հետազոտությունը: Այն գալիս է լրացնելու տվյալ ժամանակաշրջանի կերպարվեստի, կրոնական պատկերացումների, ծիսական համակարգի զանազան հարցերին վերաբերող հրապարակումները:

Կարևորում են այն, որ ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված նոր տեղեկություններով լրացվում և ամբողջացվում է տարածաշրջանի կերպարվեստին և մշակույթին վերաբերող ընդհանուր պատկերը: Գնահատելի է նաև այն, որ Գ. Պողոսյանը տարբեր հավաքածուներում և աղբյուրներում հրատարակված նյութերը հավաքելով ու խմբավորելով՝ կազմել է ուրարտական արվեստի ստեղծագործությունների մի հարուստ ալբոմ, որտեղ ընդգրկված բոլոր գործերը տեքստում օգտագործվել են: Սակայն ոչ բոլոր գործերի կողքին է նշվում գտնվելու վայրը (թանգարան, հավաքածու), որը կարևոր նշանակություն ունի գիտական ուսումնասիրության համար: Տեղեկատվական այդ բացը կարելի է լրանցել հետագա աշխատանքի ընթացքում:

Ունեն նաև մի շարք դիտողություններ ու առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերում են որոշ հասկացությունների ու արտահայտությունների ոչ հստակ ձևակերպումներին: Օրինակ՝ է 9-րդ էջում գրված է՝ «...դեռևս վերջնականապես լուծված չեն *Վանի թագավորության խորհրդավոր պատկերագրության* անհայտ, դարերի մշուշում թաքնված գաղտնիքները, որոնք կարիք ունեն պարզաբանման», պետք է լինի «Վանի թագավորության արվեստի պատկերագրության...գաղտնիքները», տեքստում գործածվում է (էջ 11, 13) «Վանի թագավորության *մոնումենտալ որմնանկարչությունը*», ընդունելի է «մոնումենտալ գեղանկարչություն» եզրույթը, մետաղի գեղարվեստական մշակմամբ զբաղվողների համար տեքստում գործածվում է «վարպետ» նաև «*նկարիչ*» բառը (էջ 110) և այլն:

Հաջորդ առաջարկությունս այն է, որ գրականության ցանկում (օրինակ՝ էջ 148-149, 152-153, 155, 157, 159) նույն հեղինակի գրքերը կամ հրապարակած հոդվածները ներկայացվեն հրատարակման տարեթվերի աճող հերթականությամբ, ինչը մատենագիտության մեջ ընդունված մոտեցում է և պարզեցնում է աղբյուրների որոնման աշխատանքը:

Այս մասնակի դիտողություններն ու առաջարկություններն ամեննին չեն ստվերում գիտատեսական պատշաճ մակարդակով կատարված

ուսումնասիրությունը, որը շարադրված է մասնագիտական գրագետ լեզով և կարդացվում է մեծ հետաքրքրությամբ:

Գտնում եմ, որ Գայանե Ռոբերտի Պողոսյանի «Ուրարտուի (Վանի թագավորություն) կերպարվեստի պատկերագրական առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունը գիտական պատշաճ մակարդակով լիովին բավարարում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի թեկնածուական աստիճանի համար ներկայացվող պահանջները, և հայցորդը միանգամայն արժանի է ԺԷ.00.03- «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտության գծով արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը, ինչի համար էլ միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդի հարգարժան անդամներին:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
արվեստագիտության թեկնածու, դոցենտ
ՀԳՊԱ Արվեստագիտության և հումանիտար
գիտությունների ամբիոնի վարիչ

Քնարիկ Ավետիսյան

ՀԳՊԱ գիտքարտուղար

Անահիտ Օհանյան

Հաստատում եմ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Քնարիկ Ավետիսյանի և ՀԳՊԱ գիտքարտուղար Անահիտ Օհանյանի ստորագրությունները:

Կադրերի հաշվառման բաժնի վարիչ

Ն. Կարապետյան

11.11.2021

